

կինն էլ երէկ գիշեր մի արտաքոյ կարգի երազ էր տեսել...

Մուծծիօն մի դիտաւորեալ ակնկառոյց նայուածք ուղղեց վալերիան.

— «... Որի մասին նա ինձ ոչինչ չի ասել» — աւելացրեց Ֆաբիօն:

Բայց այս միջոցին, վալերիան ոտքի ելելնով սենեակից գնաց դուրս: Նախա-

ճաշից անմիջապէս յետոյ, Մուծծիօն նոյնպէս մեկնեցաւ, բացատրելով որ ինք գործով պէտք է Ֆէրրարա գնար եւ թէ երեկոյէն առաջ չի վերադառնայ:

Թարգմ. Պ. ՇէֆէրՉԵԱՆ

(Շարունակելի)

Ք Ո Ւ Չ Ա Կ Ե Ա Ն Ա Ն Տ Ի Պ Տ Ա Ղ Ե Ր

(Շար.)

Իմ եար, քեզ վատ չեմ ուզեր, դու ինձի էր՝ ես խրոտվեր.
Զայդ սուտ խըռովըդ իսկի մարդ սրտէն չի հաներ (1).
Արեւն ի մօրէն ելնու՝ վերայ քո ղէն եմ կամեցեր (2):
Քո սէրն ի ծրծում՝ նըման հաւասար ոսկերքս է ցրուեր.
Զըղեղն ոսկրէն ո՞վ եհան, չոր (3) ոսկորն ի հողն է փտտեր,
Փտտի (4) ու թաւալ առնու, հասարաթն իւր սիրտն է մնացեր:

Ո՞վ ի՞նչ սիրելիս, քեզի երբեք գէշութիւն չեմ ուզեր, դու ինձի ինչո՞ւ ես սրդողեր.
Ատիկա սուտ սրդողիլ ձրն է, սրտանց չի կրնար ըլլալ:
Աճէն հեղ որ արեւը ձորմէն ծագեր է, ուզեր ե՞մ որ քո՛ւ վրայ ճառագայթէ:
Քու սէրդ ինչպէս ծուծ բոլոր ոսկորներուս ձէջ տարածուեր է.
Մուծը ոսկորէն ո՞վ կրնայ հանել. չոր ոսկորը հողին ձէջ կը փտտի,
Կը փտտի ու կը թաւալի, նորէն սիրոյ տենչն անոր խորը կը մնայ:

(1) Այս վեցեակը կը գտնուի միայն Ա. օրինակին (Տէվէնտանի) մէջ. Ձեռ. Այս տողին մէջ երկու վանկ կը պակսի. Ենթադրական Թարգմանութիւն մըն է որ տուինք:

(2) Ձեռ. կամեցել:

(3) Ձեռ. ջորս:

(4) Ձեռ. փթտի:

Այս վեցեակին մէջ առաջին տողը գրեթէ նոյնութեամբ կը գտնուի արդէն տպուած

Չըկայ ոչ արդայ ոչ ծեր որ սիրոյ կայծըն (5) չէ կտխեր.
 Չըկայ իմ խոցիս հաքիմ, այն որ կայ գեղըն (6) չէ գըտեր:
 Կամ ըզգանգատս ո՛ւմ անեմ իմ եարոջ որ (7) չերթար չասէր.
 Երթամ Ստեղծողին ասեմ զինչ որ իմ ճակատս է գըրեր:

Ոչ ծեր կայ ոչ երիտասարդ, սրուն զպաճ չըլայ սիրոյ կայծը.
 Չկայ բժիշկ իմ խոցիս, այն որ կայ՝ դեղը չէ գտեր:
 Արո՛ւն յայտնեմ իմ գանդատս, որ սիրելույս չերթայ չըտէ.
 Երթամ Աստուծոյ ըսեմ, թէ ճակատս ինչ ցաւ է գրեր:

Գեռ (8) գարունըն չէր եկեր, իմ կողէլն ինձ վարդ էր զրկեր (9).
 Թեկիկ մի վարսին մագէն ի բուր վարդին վաթութեր:
 Առի երեսիս գըրի՛ զիմ ելած հոգիս դարձուցեր.
 Ես ըզվարդն ալ ի՞նչ անեմ, զիմ տընակն աւիրեր (10):

Գեռ գարունը չէր եկած, իմ աղուորս վարդ ճըն էր զրկեր ինձի,
 Թեկիկ ճըն ալ իր վարսէն վարդին շարջն էր փաթթեր.
 Առի երեսին գրի, որ իմ ելած հոգիս ինձի դառնայ.
 Բայց ա՛լ վարդն ինչ ընեմ, քանի որ տնակս է աւիրեր:

(Շարունակելի)

ուրիշ քառեակի մը մէջ /Նախ. քուչակի Գիւանը, էջ 69, ձև./, /«իմ եար, քեզ վատ չեմ ասեր, դու հիմի է՞ր ես խռովել», երրորդը /նոյն գիրք, էջ 73, ձև/ ուրիշ վեցեակի մը մէջ՝ սա ձեռով. «Արեւն որ ամէն ալամ է ծաթեղ, քեզ եմ կամեցել», չորրորդը՝ /նոյն գիրք, էջ 75, ձև./ ուրիշ վեցեակի մը մէջ՝ սա ձեռով, «Քո սէրդ է արիւն եղել, հաւսար իմ երակս է մըտել»: Երրորդ տողը կրնայ նաեւ սա իմաստն ունենալ. «Ամէն հեղ որ արեւն է ծագեր, քեզի համար նոյն բանն /այսինքն բարիք/ եմ կամեցեր /սիրոյ նոյն զգացումն եմ ունեցեր/:

(5) Այս քառեակը կը գտնուի միայն Ա. օրինակին մէջ. Ձեռ. Կածն:

(6) Ձեռ. Գեղ:

(7) Ձեռ. իմ եարն ոչ որ: Հոս՝ Ա. օրինակն ունի սա երկու տողը,
 Լուսինն ի ամպին անուն շուտ ի երթամքն է արաբեր.

Կողէլն արեւուն անուն շուքն ի մեր երգիքըն արեր,

որ պակասուար մէկ մասն են հսգեակի մը որ Բ. օրինակին մէջ կայ եւ զոր հրատարակեցինք մեր հրդ. Թիւրն մէջ:

(8) Այս քառեակը կը գտնուի Ա. եւ Բ. /Պ. Յ. Գիւրտեանի/ օրինակին մէջ. Բ.ին մէջ չորրորդ տողը կը պակսի:

(9) Բ. օրինակ. Գարունըն չէ եղեր, կիւզելն... է զրկեր:

(10) Այս տողին մէջ երկու վանկ պակաս է, Թերեւս պէտք է ըլլար՝ «...քանի զիմ տընակս...»